Հայաստանի սկաուտական շարժման բանակատեղիում՝ Բյուրականում,

ճամբար կազմակերպելու մասին տեղեկանք

Հունիսի 4-ին հանդիպել եմ Հայաստանի սկաուտական շարժման պատասխանատուներից Նարեի հետ: Սկաուտները սիրով ընդունեցին համագործակցության մասին մեր առաջարկությունները: Եվ առաջին հերթին հրավիրեցին 10 հոգիանոց խմբով օգոստոսին մասնակցելու համահայկական սկաուտական բանակումին, որին մասնակցելու են գալիս հայկական տարբեր համայնքներից ու գաղթօջախներից:

Հունիսի 13-14-ը Բյուրականի բանակատեղին զբաղված է լինելու: Նրանք քառօրյա ճամբար են կազմակերպելու անապահով ընտանիքների 40 երեխաների համար հունիսի 13-16-ը: Քանի որ բանակատեղին դեռ ձմեռային ռեժիմից նոր է նորոգվում, այս պահին այն կարող է ընդունել միայն 40-50 հոգու: Չնայած դրան, նրանք պատրաստ են ընդունել նաև մեզ՝ եթե անգամ 40 հոգիանոց թիմով միանանք: Պարզապես կենցաղային պայմանները մի շարք դժվարություններ կառաջացնեն:

Բյուրականում նրանք ունեն շուրջ 8 հազար քառակուսի մետր պարսպապատ տարածք, որտեղ կան երեք տնակներ՝ չորսական սենյակներով:

Քանի որ սկաուտական շարժումը երեխաների ու պատանիների մոտ փորձում է զարգացնել վայրի բնության մեջ ապրելու, արշավական հմտություններ, սկաուտական բանակումներ կազմակերպելիս տնակներում գիշերում են միայն եղանակային վատ պայմանների դեպքում: Եվ անգամ այդ դեպքում երեխաները քնում են քնապարկերում: Տնակներում մահճակալներ չկան: Ճամբարները կազմակերպվում են վրաններում:

Նրանք ունեն հրահանգիչներ, որոնք կարող են երեխաներին սովորեցնել արշավականների հիմնական հմտությունները՝ ինչպես կազմակերպել թիմային աշխատանք, վրաններ կապել ու հավաքել, ուսապարկը դասավորել և անհաժեշտ պարագաներ ընտրել, ինչպես պատշաճ հագնվել արշավի ժամանակ, ինչպես քայլել, օգնել ընկերներին, ինչպես կողմնորոշվել տարածքում, պաշտպանվել կամ զգուշանալ վայրի կենդանիներից և այլն:

Իրենց ճամբարներում բացի ջոկատավերներից, անվտանգության պատասխանատուներից նրանք ունենում են նաև խոհարար, առաջին բուժօգնող Կարմիր խաչից, հրահանգիչ-ինստրուկտորներ:

Իրենց խոսքով բանակում, մեր խոսքով՝ բարձունքներ հաղթահարող սովորողների ճամբար կազմակերպելու դեպքում նրանք պատրաստակամ են տրամադրել ոչ միայն տարածքը, այլ նաև հրահանգիչներ, որոնք կուղեկցեն Ամբերդ, կօգնեն հաղթահարել այդ բարձունքը: Ճանապարհը բավական հետաքրքիր է հատկապես սկսնակ արշավականների համար: Տարածքի հիմնական վտանգը սողուններն են՝ օձերը, որոնցից էլ պաշտպանվելու մեթոդներ կարող են առաջարկել սկաուտները:

Տարածքում կա խոհանոց՝ սնունդ պատրաստելու հնարավորությունով՝ գազօջախ, կաթսաներ: Անհատական սպասքը՝ ափսե (թաս), գդալ, բաժակ սովորոբար իրենց հետ բերում են արշավորդները կամ այլ կազմակերպությունների պատասխանատուները:

Տարածքում կա մեծ թվով հյուրերի սպասրկեու հարմար սանհանգույց, որրի տանիքը ձմռան առատ ձյան պատճռով վնասվել է և նորոգման կարիք ունի: Սակայն տարածքում կան երեք սանհանգույցներ, որոնք կարող են բավարարել 40-50 հոգու:

Ճամբարում կա բաղնիք, որը հնարավոր է շահագործել միայն 200 լիտր դիզելային վառելիքով: Այդ քանակը մինիմումն է, քանի որ պակասի դեպքում հնարավորչի լինում միացնել կաթսքյատունը; Բայց այդքան վառելիքով 100-ից ավելի երեխաներ կարող են լոգանք ընդունել:

Տարածքում կա նաև մեծ խարույկի համար նախատեսված տեղ; Բացառապես չոր փայտ-ցախ հավաքում են երեխաները՝ մոտակա անտառից:

Հունիսի 13-14 –ը կրթահամալիրի ամառային ուսումնահետազոտական ճամբարի ավարտը կազմակերպելը սկաուտական բանակատեղիում կազմակերպելը նպատակահարմար չի, դրա փոխարեն հնարավոր է կազմակերպել **իններորդ դասարանցիների ավարտական ճամբարը**՝ եռօրյա կամ երկօրյա՝ հունսի 20-22: Այս մասին խորհրդակցել եմ տիկին Սուսան Մարկոսյանի ու Մարիամ Աբովյանի հետ, ներկայացրել եմ բոլոր պայմանները: Մարիամն ասաց, որ կքննարկի սովորողների հետ, կկազմեն ծրագիր:

Սկաուտները մեզ կարող են տրամադրել վրաններ, քնապարկեր: Մեզ հետ կլինեն իրենց պատասխանատուներից առնվազն երկուսը, որոնք կարող են լինել նաև հրահանգիչներ: Կուղեկցեն Ամբերդ, կօգնեն վրաններ կապել-հավաքել, խարույկ վառել:

Իսկ օգոստոսին 10 հոգանոց խմբով համահայկական սկաուտական բանակումին մասնակցելը, վստահ եմ, շատ կհետաքրքիրի սեբաստացի սովորողներին. Այն նոր ծանոթություններ ու կապեր կստեղծի, հմտություններ կսովորեցնի: Սկաուտական շարժման պատասխանատուներից Նարեն ասաց, որ բանակումին մասնակցում են 12-17 տարեկան պատանիներ, սակայն հիմնական կազմը 12-13 տարեկաններն են: Կարծում եմ՝ կրթահամալիրի 6-7 դասարանցիների համար ամառն ակտիվ հանգստի այս տարբերակով ավարտելու լավ հնարավորություն է:

Ա. Նոյեմի